ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Արևշատ Մինասյան

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հիմնաբառեր. *հայկական համայնք, հայրենիք, սփյուռք,եկեղեցի, դպրոց, ռադիոժամ, Մոնտեվիդեո, հայապահպանություն:*

Սույն հոդվածը ներկայացնում է Ուրուգվայում ձևավորված հայկական համայնքի ստեղծման պատմությունը՝ սկսած առաջին հայերի հաստատումից մինչև արդի փուլը: Հոդվածում քննության է վերցված մի շարք խոշոր հայրենանվեր ձեռնարկներ, որոնք իրականացվել է Ուրուգվայի հայկական համայնքում: Հոդվածը բաղկացած է հինգ մասից. առաջին մասում ներկայացված են Ուրուգվայում առաջին հայերի հաստատումը. որոշակի թվագրական հաշվարկներ, Ուրուգվայում հայերի հաստաստման նախադրյալները և հիմնական պատճառները: Երկրորդ մասում ներկայացված է Ուրուգվայի հայկական համայնքի կազմավորումը: Ապա խոսվում է համայնքում գործող կրթական, հասարակական-քաղաքական կառույցների և մշակույթային կենտրոնների կողմից իրականացված ձեռնարկների մասին, որոնք կարևոր դեր ունեն Ուրուգվայում հայապահպանության գործում:

Աշխատանքի նպատակն է հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում բարձրացնել սփյուռքում ձևավորված համայնքի դերակատարումը հայապահպանության գործում:

Առաջին հայերի հաստատումը Ուրուգվայում

Հայտնի է, որ ցեղասպանության հետևանքով և պետականության կորստի պայմաններում հազարավոր հայեր ապաստան գտան աշխարհի տարբեր երկրներում՝ ստեղծելով հայկական գաղթօջախներ, որոնք էլ պետականության վերականգման պայմաններում պետք է վերածվեին համայնքների: Հայերի մի հատված ապաստան գտավ Ուրուգվայում: Հատկանշական է մի իրողություն, որ Ուրուգվայում հայերը հաստատվել են ավելի վաղ, քան ցեղասպանությունը, և ունեցել են իրենց ուրույն գործունեությունը:

Ստորև կանդրադառնանք Ուրուգվայում առաջին հայերի հաստատման վերաբերյալ մեզ հայտնի տվյալներին: Հայերի գաղթը Հարավային Ամերիկա ակտիվորեն սկսվել է 19-րդ դարում, սակայն ունենք տեղեկություններ, որոնց համաձայն՝ հայերի առավել վաղ հաստատման դեպքեր կան, որոնք պայմանավորված են եղել մի շարք նախադրյալներով, հաճախ ուղղորդված են եղել նաև հատուկ գործակալների միջոցով: Այդպիսին էին, օրինակ, Բրազիլիայի կառավարության՝ հայ գաղթականներին իրենց երկրում բնակեցնելու ջանքերը հողագործությունը զարգացնելու նպատակով: Շատ հաճախ հայ գաղթականներին շռայլ խոստումներ էին տրվում, որոնք կատարվում էին մասամբ: Այսպիսով՝ վաղ շրջանի գաղթերի հավանական պատճառը սոցիալ-տնտեսական իրավիճակն էր, ինչն էլ նպաստեց փոքրաթիվ հայերի հաստատմանը Հարավային Ամերիկայում, իսկ առավել մեծ քանակի հայության հաստաստումն արդեն իսկ պայմանավորված էր թուրքական ակտիվ բռնաճնշումներով: Այս համատեքստում ուշագրավ է, որ արգենտինահայ պատմաբան Ն. Բինայանը վկայում է տվյալներ, որոնց համաձայն՝ Կոլումբոսի ճանապարհորդությանը մասնակցել են մի խումբ հայեր[1]: Սա ևս վկայություն է, որ հայերի հոսքը Հարավային Ամերիկա, ինչպես նաև Ուրուգվայ առավել վաղ է եղել:

Ուրուգվայ ժամանած առաջին հայը Գատիզենից էր մեկնել 1728 թ. դեկտեմբերին: Անվան վերաբերյալ աղբյուրներում չկա ստույգ տեղեկություն, նշվում է միայն, որ նա տնտես էր: Վերջինս նավով անցնում է հասարակածը, և ինչպես բնորոշ էր ավանդությանը, այդ ժամանակ տեղի է ունենում մեծ տոնախմբություն, որը կատարվում էր ի նշանավորում աշխարհը բաժանող գիծը անցնելու և նրան, ում առաջին անգամ բախտ էր վիճակվում այն բարեհաջող անցնելու: Ըստ տվյալների՝ ճամփորդները և անձնակազմը դրամական փրկագին էին վճարում «գծի նախագահին», ըստ կրոնական պատկերացումների՝

* Հոդվածը ներկայացվել է 03.11.2021 թ., գրախոսվել՝ 06.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Տե՛ս Քրմոյան Ս., Հայերը հարավային Ամերիկայում, «Նորք», Ե., 3, 1991, էջ 141:

Նեպտուն աստծուն: Առաջին նավը Մոնտեվիդեո ժամանեց 1729 թ. ապրիլի 9-ին[1]:

1830 թ. հուլիսի 18-ին Ուրուգվայի անկախության հռչակումը նպաստեց կրկին հայերի մեծ հոսքին դեպի Ուրուգվայ: Հատկապես 19-րդ դարում, Օսմանյան կայսրության կողմից իրականացվող ջարդերով պայմանավորված, մեծ արտագաղթ է տեղի ունենում դեպի Ուրուգվայ: 1865-1870-ական թթ. Բրազիլա է ժամանել վանեցի վարժապետը, որը Ուրուգվային սահմանակից Սանթա Կրուզ քաղաքի մեջ խանութ ուներ, վերջինս ամուսնացած էր բրազիլուհու հետ: 1860-1870-ական թթ. Ուրուգվայ է ժամանել վանեցի Հաճի Պետրոսը, որի մասին տվյալներ կան, որ Փաթակոնիա փողոցի վրա մթերանոց ուներ իր ընկերների հետ համատեղ, որոնք Մարսելից ապրանքներ էին բերում այնտեղ: 1889 թ. փետրվարի 25-ին Սիմ-սարեանը հաղորդում է, որ Մոնտեվիդեոյում հաստատվում են Վանից, Մուշից, Խարբերդից, Կարինից 30 հայեր, որոնք արտագաղթել էին թուրքական ճնշումներից ազատվելու համար, և այստեղ զբաղվում էին առևտրով[2]:

Այսպիսով մեծ թվով հայեր, հաստատվելով Մոնտեվիդեոյում, փորձ են կատարել ձևավորելու «Հայկական միություն» ընկերությունը: Այս մասին կրկին տվյալներ է հաղորդում Սիմ-սարեանը, նա նշում է. «Ամսոյս 22-ին Փաթակոնի փողոցում թիվ 9-ում, երեկոյան հավաքված էին 15 հայեր, որոնց խոսակցության թեման՝ Հայաստանի անձուկ դրությունն էր, Պ.Յ.Փ-ն ոտքի կանգնած, խոսում էր Հայաստանի անցյալի և ներկա իրավիճակի մասին մատնանշելով որ անգութ Տաճկաց ձեռքն ընկած Հայաստանը իրենց կարիքն ունի»: Զրույցը ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Առանց միութեան չկայ յեղափոխութիւն, և առանց յեղափոխութեան չկայ ազատութիւն»[3]: Որոշվեց յուրաքանչյուր անդամ ամսական պետք է վճարի մեկ ֆրանկ: Այսպիսով սա կարելի է համարել նաև հայերի առաջին կազմակերպման փորձը Ուրուգվայում:

1889 թ. Ուրուգվայի մայրաքաղաքում հաստատվել էին 25 հայեր, մեծ մասը խարբերդցի էին, որոնք մանրավաճառությամբ էին զբաղվում: 1890 թ. Ուրուգվայ ժամանեց Մանուկ Ազարյանը, որը Վանից էր, և մինչ այդ զբաղվել էր ոսկերչությամբ, ժամագործությամբ, զինագործությամբ: Ժամանելով Մոնտեվիդեո՝ նա խանութ է բացում: Ամուսնանալով տեղացի կնոջ հետ՝ նա ունենում է երեք զավակ, որոնցից ավագը՝ Խուլիան Ալպերտոն, Ուրուգվայի առաջին հայ զինվորականը պետք է դառնար, իսկ կրտսերը՝ Մարիա Եսթերը՝ առաջին հայազգի ուսուցչուհին: 1889-1990 թթ. Ուրուգվայ ժամանած հայերի թվաքանակի վերաբերյալ պահպանված ստույգ տեղեկություններ չկան. միայն հատուկենտ անուններ են, որոնց թվում՝ խարբերդցի Հովհաննես Մրջենիկյանը: 1911-1915 թթ. արդեն նկատելի է դառնում հայերի համեմատաբար մեծ հոսքը դեպի Ուրուգվայ. մոտավոր հաշվարկներով 74 հայ է հաստատվում, նրանց շարքում էին նաև Արամ Ղուկասյանը, Հովհաննես Աթեշյանը, որոնք պետք է մեծ դերակատարում ունենային հայ համայնքի ձևավորման գործում[4]: Այսպիսով՝ ելնելով ստույգ տեղեկություններից՝ մենք հանգում ենք այն եզրակացության, որ հայերի մի ստվար հատված առավել վաղ հաստատվել է Ուրուգվայում՝ սկսած 17-րդ դարից և այստեղ զբաղվելով առևտրով, որը բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանին: Մյուս մասը արդեն իսկ հաստատվում է Ուրուգվայում թուրքական բռնաճնշման հետևանքով: Հոծ հայության հաստատումը Ուրուգվայում դառնում է նախահիմք, որի հիման վրա էլ պետք է ստեղծվեր համայնքը, որը մեծ դերակատարում էր ունենալու Ուրուգվայում հաստատված հայերի հայապահպանության, սեփական հայրենիքին և արմատներին հաղորդ մնալու գործում:

Ուրուգվայի հայկական համայնքի կազմավորումը

Ուրուգվայի հայկական համայնքի կազմավորումը, անշուշտ, թուրքական բռնաճնշումների հետևանք էր: Ուրուգվայի հայկական համայնքի կազմակերպմանը նոր թափ տվեց 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումը: Համաձայն էլ Տիան օրաթերթի տվյալների՝ ուրուգվահայության շրջանում կային նաև քննարկումներ՝ վերոհիշյալ ժամանակահատվածում բացելու Հայկական կեդրոնի մասնաճյուղ ՀՀ-ում: Հայկական Կեդրոնը այդ շրջանում նաև կազմակերպում էր հանգանակություններ, որոնք ուղված էին նորահռչակ ՀՀ-ին: Անգամ մայիսի 28-ի Հայաստանի անկախության

[1] Տե՛ս Մատթէոսեան Վ., Ուրուկուայի հայ համայնքը (սկիզբէն մինչև 1950), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2002, հատոր ԻԲ, էջ 138:

[2] Տե՛ս Սիմսարեան, Նամակ Հարաւային Ամերիկէն, «Արմէնիա», Մարսել, դ տարի, 54:

[3] Տե՛ս Սիմսարեան, Նամակ Հարաւային Ամերիկէն, «Արմէնիա», Մարսել, դ տարի, 54:

[4] Տե՛ս Մատթէոսեան Վ., Ուրուկուայի հայ համայնքը (սկիզբէն մինչև 1950), էջ 139-141:

տարեդարձի հռչակման կապակցությամբ տեղի է ունեցել հավաք, որտեղ ելույթ են ունեցել Արամ Շահրիկյանը, Նազարեթ Խուլեմանյանը և ուրիշներ, որոնք, խոսելով հայ զինվորի քաջագործությունից, միևնույն ժամանակ նախաձեռնություն են կազմակերպել՝ բացելով հանգանակություն, ինչի արդյունքում հավաքվել է շուրջ 2460 ֆրանկ, որն ուղղվել է հայոց բանակին[1]: Այսպիսով՝ Ուրուգվայի հայկական համայնքի կազմակերպման գործընթացը տեղի ունեցավ 1920-ական թթ.: Հետագա տարիների ընթացքում արդեն սկսեցին ձևավորվել տարբեր բնույթի հասարակական կազմակերպություններ, որոնց էլ վերապահված էր լինելու ապահովել համայնքի կենսունակությունը և յուրօրինակ կամուրջ դառնալ հայրենիք-սփյուռք հարաբերությունների ձևավորման գործընթացում:

Այսօր պատմագիտության մեջ առկա իրարամերժ տեսակետներ կան համայնքի ձևավորման տարեթվի շուրջ: Համաձայն ՀԲԸՄ տեղեկատու՝ի համայնքը ձևավորվել է 1922 թ., իսկ Աշոտ Արծրունու մոտ հանդիպում ենք համայնքի ձևավորման այլ տարեթիվ՝ 1923 թ. հոկտեմբերը՝ Գաղութային միության հիմնադրման տարեթիվը, հիշատակում է նաև Գաղութային միության 5 հոգուց բաղկացած ղեկավար կազմը՝ Կարապետ Զատիկյանը (ատենապետ), Արամ Ղուկասյանը (ատենադպիր), Հովհաննես Աթեշյանը (գանձապահ), Ծերուն Գոլթուկյանը, Երվանդ Քարամանյանը (խորհրդականներ): Գաղութային Միությունը 1930 թ. հուլիսի 9-ին Ուրուգվայի կառավարության որոշմամբ պաշտոնապես ճանաչվել է Հայ գաղութային ընդհանուր միություն (Ունիոն Խեներալ Արմենիանա) անվանումով: Միության անդամների թիվը 100 էր[2]: 1937 թ. Հայ գաղութային ընդհանուր միությունը լուծարվեց, որին փոխարինեց Ուրուգվահայ թեմի Կենտրոնական վարչական խորհուրդը[3]: Այն գործում է մին օրս:

Նշված ժամանակաշրջանում տեղի հայության թիվը կազմել է մոտ 3 հազար: Գաղութն ավելի է ստվարացել 1926 թ., երբ սկսվել է հայ գաղթականների երկրորդ ստվար հոսքը Ուրուգվայ: 1931 թ. գաղութի մարդահամարի տվյալներով Ուրուգվայում բնակվել է 4 հազար հայ:

1940-ական թթ. սկզբին Ուրուգվայի մայրաքաղաքում բնակվել է շուրջ 1200 հայ ընտանիք (մոտ 6 հազար մարդ)՝ գաղթած Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներից ու բնակավայրերից[4]: Արդեն 1982 թ. տվյալներով Ուրուգվայում բնակվել է 14000 հայ[5]: Այժմ Ուրուգվայում բնակվում է 12000-14000 հայ: Գերակշիռ մասը կենտրոնացած է Մոնտեվիդեոյում[6]:

Դպրոցները

Ուրուգվայի հայկական համայանքում առաջին դպրոցը կազմակերպվել է դեռ 1923 թ., երբ Մոնտեվիդեոյի Սերրո թաղամասում գնված տունը ծառայել է որպես եկեղեցի և դպրոց[7]: Այնուհետև հիմնվել են Աբգարյան, Սահակյան, Ներսեսյան, Խրիմյան, ավելի ուշ՝ Մամիկոնյան, Մեսրոպյան, Հայկազյան վարժարանները: 1942 թ. Կենտրոնական վարչական խորհուրդը հովանավորում էր չորս դպրոցի՝ Մամիկոնյան, Մեսրոպյան, Հայկազյան և Խրիմյան[8]: Այս դպրոցները իրենց բնույթով երկսեռ նախակրթարաններ էին, որտեղ աշակերտները ուսանում էին հայերեն. միայն բացառություն էր կազմում Մամիկոնյան դպրոցը, որն ուներ նաև իսպաներենի բաժին: 1940-ական թթ. համայնքում գործում էր 6 դպրոց՝ 430 աշակերտով: Ժամանակի ընթացքում դպրոցների թիվը նվազում էր:

2021 թ.դրությամբ համայնքում գործում է երկու հայկական դպրոց՝ Ներսեսյան (Երվանդ Կիսաճիկյան) և Նուբարյան-Ալեք Մանուկյան: Ներսեսյան վարժարանը հիմնվել է 1972 թ. հոկտեմբերին Մոնտեվիդեոյում, գործում է Կենտրոնական վարչական խորհուրդի հովանավորությամբ: Այն ունի մանկապարտեզ և նախակրթարան: Վարժարան կարող են հաճախել 3 ամսականից, բայց պարտադիր ուսուցումը 3 տարեկանից մինչև 6 տարեկան է: Դպրոցի դասընթացը բաղկացած է երկու մասից՝ առավոտից մինչև կեսօր (ճաշ) հայկական

[1] Տե՛ս Հայ գաղթականությունը, «Կոչնակ Հայաստանի», 24 հուլիս 1920, Նիւ Եորք, էջ 958:
[2] Տե՛ս Մատթէոսեան Վ., Ուրուկուայի հայ համայնքը (սկիզբէն մինչև 1950), էջ 145, 149:
[3] Տե՛ս Մատթէոսեան Վ., Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005, էջ 276:
[4] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 613:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g.14, գ. 98, թ. 1:
[6] Տեղեկությունը հաղորդել է ուրուգվահայ Սարգիս Փանոսյանը, 09.09.2021:
[7] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 615:
[8] Տե՛ս Մատթէոսեան Վ., Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, էջ 278:

ուսուցման ժամանակահատվածն է, որի ժամանակ սովորեցնում են հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն, ավանդական ծեսեր ազգային երգ ու պար: Օրվա երկրորդ կեսին ուսուցումը շարունակվում է, ինչպես իսպանական տեղական պետական դպրոցում: 2021 թ. ապրիլի 25-ի դրությամբ աշակերտների թիվը 60 է, որոնցից կեսը հայեր չեն[1]: 2020 թ. հուլիսից մինչ օրս դպրոցի տնօրենն է Լիլիթ Հարությունյանը:

ՀԲԸՄ հովանավորչությամբ նաև գործել է ավագ դպրոց, որը արդեն 5 տարի է չի գործում:

Նուբարյան-Ալեք Մանուկյան վարժարանը հիմնադրվել է ՀԲԲՄ հովանավորությամբ 1971 թ. ունի մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական բաժին: Այստեղ 2000 թ. սովորում էր շուրջ 300 աշակերտ: Դասավանդում են հայոց լեզու, գրականություն, պատմություն[2]:

Եկեղեցիները

Ուրուգվայի 15-հազարանոց հայ համայնքում իր ուրույն դերակատարումը ունի եկեղեցին: Համայնքում գործում է առաքելական մեկ եկեղեցի: Ուրուգվայի թեմը կազմավորվել է 1983 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: 1938-1982 թթ. ուրուգվահայ համայնքը Արգենտինայի, Բրազիլիայի և Չիլիի հայ համայնքների հետ ընդգրկված էր Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության կազմում (կենտրոնը՝ Բուենոս Այրես): Առաջին հայրապետական պատվիրակն էր Գարեգին արք. Խաչատուրյանը (1938-1951 թթ, 1951-1961 թթ.՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք): 1983 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակությունը բաժանվել է երեք առանձին (Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի) թեմերի: 1984 թ. Ուրուգվահայոց թեմի առաջին առաջնորդ է նշանակվել Հակոբ վրդ. (1990 թվականից եպիսկոպոս) Գըլընճյանը, նա պաշտոնավորում է մինչև օրս: Համայնքում ներկայումս գործող միակ Հայ առաքելական եկեղեցին 1964 թ. համազաղութային հանգանակությամբ կառուցված Ս. Ներսես Շնորհալի առաջնորդանիստ եկեղեցին է (օծվել է 1965 թ.)[3]:

Ուրուգվայի հայկական համայնքում իրենց ուրույն տեղն ունեն հայ ավետարանական և կաթողիկե համայնքները: Ըստ Կ. Ատանալյանի՝ համայնքի ձևավորման պահին՝ 1926 թ. (Հայ ավետարանական առաջին եկեղեցու հիմնադրման տարեթիվն է), նրա անդամները կազմում էին 6-8 ընտանիք: 1938 թ. համայնքի անդամների թիվը հասնում էր արդեն 60 ընտանիքի: Այդ ժամանակաշրջանում եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի սաների միջին թիվը հասնում էր 30-ի[4]: Այժմ Ուրուգվայում կա 2 ավետարանական եկեղեցի: Այժմ կաթողիկե համայնքում գործող միակ եկեղեցին Պզոմմարն է: Համայնքը ղեկավարում և պաշտոնապես ներկայացնում է Հայ առաքելական եկեղեցու Կենտրոնական վարչական խորհուրդը[5]:

Հասարակական-քաղաքական կյանքը

1930-ական թթ. Մոնտեվիդեոյում հիմնվել են բազմաթիվ հայրենակցական, բարեգործական և երիտասարդական կազմակերպություններ, գործունեություն են ծավալել հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները: Բարելավվել է գաղութի տնտեսական վիճակը:

1954 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ուրուգվահայ համայնքում գործում էին մի շարք հասարակական և քաղաքական կազմակերպություններ, որոնց թվում՝ Հայ ազգային կեդրոնը, որի անդամների թիվը հաղթանակի տարիներին 400 էր, իսկ հետագայում քաղաքական աննպաստ պայմանների պատճառով թիվը նվազեց՝ դառնալով 100: Կեդրոնին ենթակա միություններն էին Կանանց օժանդակ մարմինը իր 58 անդամներով, Երևան երիտասարդաց մարմնամարզական միությունը, Ներսեսյան վարժարանը, նաև ՀԲԸՄ-ն՝ իր ենթակա մարմիններով: Գործում էին նաև հայկական երկու քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, որի անդամների թիվը 45 էր, Սոցիալ- դեմոկրատական

[1] Հարցազրույց Ներսեսյան դպրոցի տնօրեն Լիլիթ Հարությունյանի հետ, 25.04.2021:

[2] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 615:

[3] Տե՛ս Armenian Diocese of Uruguay, https://hehem.am/en/regions/hrv-amerika/urugvayi-hayots-tem . 10.09.2021:

[4] Հովյան Վ., Ուրուգվայի հայ ավետարանական համայնքը, «Գլոբուս, ազգային անվտանգություն», թիվ 1 (23), Ե., 2012, էջ 33:

[5] Տեղեկությունը հաղորդել է ուրուգվահայ Սարգիս Փանոսյանը, 09.09.2021:

հնչակյան կուսակցությունը, որը անկազմակերպ իրավիճակում էր գտնվում[1]:

1987 թ. Ուրուգվայի կառավարությունը Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության հիմնադրման 100-ամյա հոբելյանի առթիվ թողարկել է հատուկ փոստային դրոշմանիշ[2]:

Հայրենակցական միություններից ներկայումս գործում են Մարաշի և Յոզղաթի միությունները, կուսակցություններից՝ ՀՅԴ, ՍԴՀԿ, որոնք մեծ դերակատարում են ստանձնում համայնքում հայապահպանությանը ուղղված ձեռնարկներում և իրականացնում են մի շարք միջոցառումներ:

Համայնքում հասարակական-քաղաքական կազմակերպություններն ի սկզբանե ձեռնամուխ են եղել հայապահպանությանը: Այդ հազմակերպությունների շնորհիվ էր, որ Ուրուգվայում անվանակոչվեցին մի շարք փողոցներ և հրապարակներ: 1953 թ. Մոնտեվիդեոյի Մալվին թաղամասում հիշատակվում է «Արմենիա» անունը կրող փողոց[3]: Քանի որ 1971 թ. ստեղծվել է համանուն հրապարակ, թաղամասը հետագայում անվանափոխվել է «Երևան» և այժմ հայտնի է «Երևան» անունով, որի հովանավորությունը կատարել է «Ռադիո Արմենիան»: 1971 թ. սեպտեմբերի 21-ին քաղաքապետարանը վավերացնում է նահանգային խորհրդի սեպտեմբերի 16-ի որոշումը, համաձայն որի՝ որոշվում է Ուրուգվայում ստեղծել «Արմենիա» անունը կրող հրապարակ, որի բացումը տեղի է ունեցել նույն թվականի հոկտեմբերի 12-ին[4]: Այստեղ տեղադրվել է նաև Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող, որի կառուցման աշխատանքները սկսվել են 1965 թ. ապրիլի 24-ին՝ Սան-Պաուլոյի հայ համայնքի նախաձեռնությամբ: Կառուցման աշխատանքներն ավարտվել են 1966 թ.: Պատին պորտուգալերեն մեջբերված է հայ բանաստեղծ Միքայել Նալբանդյանի ստեղծագործությունից: «Արմենիա» հրապարակում է գտնվում նաև գրանիտե, բրոնզե հուշարձանը, որի ստեղծման նախաձեռնությունը Ե. Կիսաջիկյանին է: Համալիրն ամբողջացնում է Ժ. Ռիկալդենի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված տուֆե խաչքարը (նախաձեռնությունը՝ Ա. Քիսաջիկյանի)[5]:

1982 թ. հուլիսի 19-ին Պիրապոլիս ծովափնյա քաղաքում բացվեց «Արմենիա» փողոցը [6] : Ուշագրավ է, որ նմանատիպ անվանակոչումները Ուրուգվայում եղան շարունակական, և սա ևս մեկ անգամ վկայում է Ուրուգվայում հայ համայնքի մեծ հեղինակության մասին: 2016 թ. հոկտեմբերի 24–ին Մոնտեվիդեոյի քաղաքապետարանը տեղի բնակիչների խնդրանքով Պենարոլ շրջանի կենտրոնական հրապարակներից մեկը կոչել է Մարտին Տերյանի անունով, որը Հայոց ցեղասպանությունը վերապրած էր: Մարտին Տերյանը ծնվել է 1913 թ Մարաշում: Նա հաստատվեց Ուրուգվայում, Մոնտեվիդեոյի Պենարոլի շրջանում ստեղծեց խանութ, որը գործել է 40 տարի: Տերյանը և նրա կինը միշտ օգնել են թաղի աղքատ երեխաներին: Հրապարակի բացման արարողության ժամանակ Պենարոլ քաղաքի բնակիչները նշեցին, որ չեն կարող մոռանալ նրանց աջակցությունը, և հրապարակը Մարտին Տերյանի անունով կոչելով՝ նրանք վառ կպահեն նրա հիշատակը: Տերյանը Հայաստանի քաղաքացիություն է ստացել 1990-ական թթ.: Մահացել է 2006 թ. Մոնտեվիդեոյում [7] :

Աշխարհի ցանկացած մասում ապրող հայի ցանկությունն է լինել իր մայր հայրենիքում: Ուրուգվահայերը նույնպես բացառություն չեն: Մոնտեվիդեոյից առաջին անգամ՝ 1955 թ. աշնանը, 6 հոգուց բաղկացած խումբ է այցելում Խորհրդային Հայաստան՝ Հայ ազգային կեդրոնի փոխնախագահ Կ. Կեցոյանի և երկրորդ քարտուղար Թ. Ղուկասյանի ղեկավարությամբ[8]:

Ուրուգվայը պաշտոնապես Հայոց ցեղասպանությունը ճանաչած առաջին պետությունն է 1965 թ. մայիսի 20-ին, այն վավերացրել է երկրի նախագահ Խորխե Բաժեն:

Համայնքի պատմության մեջ պարբերական մամուլը շոշափելի դեր չի խաղացել:

---

[1]Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, g. 3, գ. 207, թ.10:

[2] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 614:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 5, գ. 278, թ. 56:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g.5, գ.267, թ.39:

[5] Տե՛ս Հարավային Ամերիկայի հայկական համայնքները, http://archive3.ankakh.com/article/53383/%E2%80%8Bharavayin-amyerikayi-haykakan-hamaynqnyere, 11.09.2021.

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ.875, g.14, գ.95, թ.1:

[7] Տե՛ս Square named after Armenian Genocide survivor in Montevideo, Uruguay, https://armenpress.am/eng/news/864944/square-named-after-armenian-genocide-survivor-in-montevideo-uruguay.html, 11.09.2021:

[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, g. 3, գ. 207, թ.16:

1993 թվականից Մոնտեվիդեոյում հրատարակվող «Հայ ընտանիք» պարբերաթերթը (հայերեն և իսպաներեն, խմբագիր՝ Մարիա Զուլամյան) միակն է: Լրատվամիջոցների դերը հիմնականում կատարել են հայկական ռադիոկայանները, որոնցից ներկայումս գործում են երկուսը. 1935 թվականից՝ «Ռադիո Արմենիա» (տնօրեն՝ Արաքսի Ռուբենյան, հիմնադիր՝ Հարություն Ռուբենյան) և «Կոմիտաս» (ՀՅԴ, տնօրեն՝ Աբրահամ Բելյան) ամենօրյա ռադիոժամերը[1]:

«Ռադիո Արմենիան» գործել է մինչև 2007 թվականը, հիմնադիրն է եղել Հարություն Ռուբինյանը: 2007 թ. փակվել է ֆինանսական խնդիրների պատճառով, և Դիեգո Կարամանուկյանի նախաձեռնությամբ, որը «Ռադիո Արմենիայի» հաղորդավարն էր, բացվել է «Արաքս Ռադիոժամը», որը, ի տարբերություն «Ռադիո Արմենիայի», միայն կիրակի օրերին է հեռարձակվում:

«Կոմիտաս» ռադիոժամը գործել է 1935 թվականից սկսած և գործում է մինչ օրս: Մեծ եղեռնից փրկված 12 հայեր, ապաստանելով Ուրուգվայում, համախմբվում և ստեղծում են ռադիոհաղորդում, որը հեռարձակվում է հայերեն և իսպաներեն: 80 տարի շարունակ «Կոմիտաս ռադիոժամը» մյուս հռչակավոր «Արմենիա» ռադիոժամի հետ եղել է և մնում է ոչ միայն Ուրուգվայի, այլև առհասարակ Լատինական Ամերիկայի հայությանը համախմբող օղակ: Այստեղ հյուրընկալվել են Հայաստանից և Սփյուռքի տարբեր գաղթօջախներից Ուրուգվայ ժամանած հայեր՝ քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ, զանազան կառույցներ՝ ՀՕՖ-ը, ՀՕՄ-ը, Համազգային կրթական և մշակութային միությունը, Հայ դատի հանձնաժողովը: «Կոմիտաս» ռադիոժամը Լատինական Ամերիկայում հայության պաշտոնական ձայնն է արդեն 80 տարի[2]:

Եզրակացություն

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Ուրուգվայի հայությունը, չնայած ձուլման մարտահրավերներին, չկորցնելով իր ազգային դիմագիծը, շարունակում է հաղորդ մնալ իր արմատներին՝ կատարելով մի շարք ձեռնարկներ՝ ուղղված հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդմանը:

Аревшат Минасян, АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ. Этот труд представляет историю создания сформировавшейся в Уругвае армянской общины, начиная с утверждения первых армян до современного этапа. В статье рассмотрен ряд крупных патриотических инициатив, осуществленных в армянской общине Уругвая.

Статья состоит из пяти частей, в первой части представлено утверждение первых армян в Уругвае: некоторые арифметические расчеты: предпосылки и основные причины установления армян в Уругвае. Во второй части представлено формирование армянской общины Уругвая. Затем говорится о действующих в общине образовательных, общественно-политических структурах и культурных центрах, осуществленных ими инициативах в деле сохранения армянства в Уругвае.

Цель работы в контексте взаимоотношений Родина-Диаспора повысить роль сформировавшейся в диаспоре общины в деле сохранения армянства.

Ключевые слова: армянская община, Родина, Диаспора, церковь, школа, радиочас, Монтевидео, сохранение армянства.

Arevshat Minasyan, THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY. The following paper represents the story of Uruguay's Armenian community formation from the very first establishment of Armenian community to present days. This article discusses handful of significant patriotic manuals, which were carried out by Armenian community of Uruguay.

The article consists of five parts; the first part represents the initial establishment of Armenian community, some chronological calculations, the main reasons and prerequisites for the establishment of Armenian community. The second part represents the formation of Armenian community. Then it speaks about the educational, socio-political structures that function

[1] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 615:

[2] Տե՛ս «Կոմիտաս ռադիոժամ» հայության ձայնը Լատինական Ամերիկայում, https://www.azg.am/AM/2015052918?fbclid=IwAR1xFaNUgzquBM9564s-n3RBOAQAhWeEKuJihFsIpPx-_agL2dmILCBKo6E, 11.09.2021:

within the community and about manuals carried out by cultural centers, which have a huge impact on the preservation of Armenian Identity.

The goal of this paper is to raise the awareness of the importance of Armenian community in the context of Homeland – Diaspora relationship.

Keywords: Armenian community, homeland, diaspora, church, school, Radiohour (famous Armenian radio program) Montevideo, preservation of Armenian community.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300